ունեն: Նրանք նայում են դէպի յետ, եւ լեռների խստաշունչ քամին նրանց դէմքերի վրայ ակօսած է տարօրինակ կնճիռներ, որոնք ժպիտը դառն մելամաղձոտութեան են վերածում եւ իրենց խօսած հայերէնի մէջ բիրտ մի շեշտ են դնում:

Բակերի մէջ, փայտէ ցանկապատերի ետեւ, ջրակոյտեր, հաւեր՝ յաղթանդամ աքլորների շուրջը բոլորուած ու անխուսափելի եւ կծու կաղամբի հոտը:

Մի քանի քայլ աւելի վեր՝ հայ գիւղը: Խոնարհ, քարաշէն, միշտ էլ իր ոճը պահող եկեղեցին, ու դեռնին դրեթէ հաւասար, հողով ծածկուած քարերի կոյտը... Հայ գիւղը լերան վրայ չբարձրացող, այլ լերան հետ հաւասարուող, հայ գիւղը, ինքն իր մէջ քաշուած, խոնարհ, տխուր եւ մտահոգ: Կոյտերի մօտ շինականներ են նստած՝ անշարժ, հանդիստ, անտարբեր: Ձեն իսկ բարեւում: Նրանց ոչինչ չի զարմացնում: Ի՞նչ կայ որ, ո՞վքեր են որ... Նայում են դէպի ներս քաշուած նայուածքներով, մի քիչ այնպէս, ինչպէս մօտակայ ժայռերը, ինչպէս մենակեաց կանգնած հաստատուն լեռները: Ու հագած են նոյն այդ ժայռերի գոյն ունեցող զգեստներ: Եկեւոր չեն, այլ շրջապատող ամբողջութեան անբաժանելի մասն են: Ի՞նչ կայ որ, ո՞վքեր են որ...

— Զարմանալին այն է, որ մեր այդ գիւղացիները տասնեակ տարիներով ապրում են եկեւոր ռուսների մօտ եւ ոչ մի բան չեն ընդօրինակում:

— Տօ՛, նայի՛ր, գոմի մէջ աղաւնի էլ կայ:

— Մինչեւ հիմա պատուհան իսկ չդիտեն շինել: Քաղաքակրթութիւնը...

— Ի՞նչ նիհար են այստեղի կովերը:

— Հանդիպում է ժայռին:

— Բնական է:

— Բնակա՞ն է: Նորից պարադոքս...

— Ինձ համար խոր ճշմարտութիւն: Հայը ռուսին, ինչպէս նաեւ Թուրքին չի կարող յարգել:

— Եւ ինչո՞ւ:

— Որովհետեւ այդ երկու ազգերը քար տաշել չգիտեն:

— Այ քեզ բան...

— Այո՛, թէ՛ ռուսները եւ թէ՛ Թուրքերը քար տաշել չգիտեն: Մեր գիւղացին նայում է նրանց վրայ, ինչպէս տարերային ուժերի վրայ՝ անողոք քամի, մրրիկ, երկրաշարժային կոյր ցնցում, որի դէմ ոչինչ չես կարող անել, որի հետ պէտք է յարմարուել եւ ըստ կարելւոյն կռուել: Արհամարհում է: Թուրքը «չուն» է, «բարբարոս» է՝ այդ բառը նա գործ է ածում յունական իմաստով՝ նա չի «մեռնում», այլ «պատում է, սատկում է»· ռուսը՝ «սոխ» է, «կեղտոտ», բիրտ, կոպիտ, յիմար...

— Կրօնական նախապաշարումներ...

— Նախապաշարումներն իսկ ունեն իրենց խոր պատճառները, որոնք տարօրինակ կերպով ճշմարտութեան են մօտենում: Հայ մարդը դերազանցապէս յարակայական է: Իր ամբողջ դաղտնիքը եւ իր ողբերգութիւնը դրա մէջն է: Ու մենք, որ մասամբ ծանօթ ենք մեր պատմութեան, բնաւ խորհած չենք այդ պատմութեան փիլիսոփայութեան վրայ:

— Փիլիսոփայութիւնը վտանգաւոր բառ է· ինչպէս ուզես կարող ես դարձնել:

— Ամէն ինչ մօտենալու կերպից է կախուած: Վայրենին փիլիսոփայ չէ, նա տարերային երեւոյթները նախնական ուժերի է վերածում եւ ենթարկւում նրանց: Նիւթապաշտութիւնը նոր վայրենացման մի կերպ է:

— Հակաբնազանցական...

— Հակահոգեկան: Ներկայ պարադային նիւթը աւելի փոփոխական է քան հոգին: Հայ ժողովուրդի կայունութիւնը եւ տեւականութիւնը առարկայական, արտաքին ձեռքից կախուած չէ, այլ ներքին բիրտ է, հաւասարակշռուած բովանդակութիւն, դաղտնի իմաստ: Հայը չի սիրում ու չի յարգում Թուրքին եւ ռուսին, որովհետեւ նրանք վրանների ժողովրդներ են· ամէն տեղ եկեւոր, ամէն տեղից անցնող: Ռիթմը թիւ է, համեմատութիւն, յարաբերութիւն է պարապի եւ լեցուածքի միջեւ, լայնութեան եւ բարձրութեան միջեւ, ամբողջի եւ մասերի միջեւ: Հայը Հռոմի դէմ ատելութիւն չունի, որովհետեւ նա գիտէր կամուրջներ շինել եւ սիւներ դետեղել, ինչպէս նաեւ պարսիկը· բայց որովհետեւ այդ ժողովուրդների կառուցողական ձեւը չէր համապատասխանում մեր ազգի ոգու դոյացման ինքնուրոյն թափին, մենք նրանցից բաժան-